ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

30 ապրիլի 2019 թվականի N 134-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ <<ԱՅԳԵՁՈՐԻ ԱԿ>> ՊՈԱԿ-Ի ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ ՊԱՏՇԱՃ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին կետով

Կ ա ր գ ա դ ր ո ւ մ ե մ

1. «Այգեձորի ԱԿ» ՊՈԱԿ –ի տնօրեն Մ.Գրիգորյանին՝
   1) «Այգեձորի ԱԿ» ՊՈԱԿ–ի բուժօգնությունը կազմակերպել Համաշխարհային բանկի ծրագրով կառուցված ընտանեկան բժշկի գրասենյակի շենքում հետևյալ հասցեով՝ ՀՀ, գյուղ Այգեձոր, 12 փողոց, 19 շինություն:
   2) Տեղափոխման աշխատանքներն իրականացնել 10 օրյա ժամկետում՝ պլան – ժամանակացույցին համապատասխան (հավելված 1):
2. ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻՄ և ՀԾ հարցերով բաժնի վարիչ պարոն Դ.Մխիթարյանին՝ աջակցել և համակարգել պլանավորված աշխատանքները, աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին զեկուցել ամենօրյա կարգով:
3. Առաջարկել ՀՀ Բերդ համայնքի ղեկավար պարոն Հ. Մանուչարյանին՝ տեղափոխության համար հատկացնել բեռնատար ավտոմեքենա:
4. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական պարոն Ա.Գրիգորյանին և առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ պարոն Ռ.Տիգրանյանին:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

30.04.2019

X

հավելված 1

Պլան – ժամանակացույց

№	Գործողություն	Ժամկետ	Պատասխանատու
1.	Տեղեկատվություն բնակչությանը բուժօգնության կազմակերպման մասին նոր հասցեում	անընդմեջ	Մ.Գրիգորյան Դ.Մխիթարյան Ռ.Տիգրանյան Ա.Գրիգորյան
2.	Այց նոր շինություն, մաքրում, հարդարում, կոմունիկացիաների ստուգում	2 օր	Մ.Գրիգորյան Դ.Մխիթարյան
3.	Բուժօգնության լոգիստիկ պլանավորում, աշխատատեղերի ձևավորում	Ընթացիկ	Մ.Գրիգորյան Ռ.Տիգրանյան Ա.Գրիգորյան
4.	Տեղափոխման ենթակա պարագաների տեսակավորում	1 օր	Մ.Գրիգորյան
5.	Կահույքի, աշխատանքային և կենցաղային տեխնիկայի տեղափոխում	1 օր	Մ.Գրիգորյան Դ.Մխիթարյան
6.	Բժշկական փաստաթղթերի, դեղորայքի, լաբորատոր սարքավորումների և բուժօգնության այլ պարագաների տեղափոխում	1 օր	Մ.Գրիգորյան Դ.Մխիթարյան
7.	Տեղափոխված իրերի և փաստաթղթերի դասավորում	1 օր	Մ.Գրիգորյան
8.	Աշխատակազմի ճեպազրույցում, աշխատատեղերի բաշխում և հարմարեցում	1 օր	Մ.Գրիգորյան Ա.Գրիգորյան
9.	Հանդիսավոր բացում Տավուշի մարզպետի մասնակցությամբ	1 օր	Մ.Գրիգորյան Դ.Մխիթարյան Ռ.Տիգրանյան Ա.Գրիգորյան

ՀՀ Տավուշի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Ա.Գևորգյան